ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Կաթուղիկոսական խնդրի առիթով մեր լրագիրները գրելիս, ընտրելի են համարում և վարդապետներին և քահանաներին և մինչև անգամ աշխարհականներին։

Մեր եկեղեցու 1600 տարուայ ամբողջ պատմութեան մէջ մի քանի դէպք կարելի է յիշել, որ աշխարհականութիւնից և քահանայութիւնից կոչուած լինեն ուղղակի կաթուղիկոսութեան. սակայն այդ դէպքերն էլ չարաբաստ ժամանակի բացառիկ հանգամանքի հետևանք են, և ընտրեալները տացել են հոգևոր առաջնորդները օրինաւոր ձեռնադրութեամբ, մինչև Սահակ Պարթև՝ կամ Կեսարիայում կամ հայ հայրապետից, ինչպէս Ս. Արիստակէսը իւր հայր Գրիգոր Լուսաւորչից, իսկ անուհետև, հայրապետական ընտրութիւնների ժամանակ. հաւանօրէն, ներկայ եղող Աղուանից կաթուղիկոսից ձեռնադրուել են եպիսկոպոս և ապա եպիսկոպոսներից օծուել կաթուղիկոս։

Այժմ այդ բացառիկ հանգամանքները չկան, ուրեմն և կարիք չկայ շեղուել եկեղեցու դարերով սրբազործուած կանոնից։ Հայրապետը ընտրուել է միշտ եպիսկոպոսական դասից, այս տեսակ գործողութիւնը կանոնաւորուել է և վերջնական ձև է ստացել հանգ. Ներսէս կաթուղիկոսի ընտրութեամբ 1843 թուին։ Այդ ժամանակից սկսած ազգի ընտրուած աշխարհիկ պատգամաւորների և իրաւասէր հոգևոր ներկայացուցիչների հայրապետական ընտրութեան համազգային ժողովում կարդացուում է միայն արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների անուանական ցուցակը. և այդ անուններից ընտրուում են հայրապետական աթոռի թեկնածուները։ Այդ ցուցակից դուրս մնացած անձինք ընտրելի չեն։ Այս ձևով կատարուել են Ներսէս Ե., Մատթէոս Ա., Գէորգ Դ., Մակար Ա., Մկրտիչ Ա.. և Մատթէոս Բ., կաթուղիկոսների ընտրութիւնները։

Աչքի առաջ ունենալով լրագրերի և հասարակութեան մէջ արծարծուող խնդիրը — որ վարդապետները, քահանաները և մինչև իսկ աշխարհականները կարող են կաթոլիկական ընտրելի դառնալ—Մինոգի արքեպիսկոպոսը դիմել է և առաջել հրահանգ Ներքին Գործերի պ. Նախարարից, թէ ինչպէս ունենալով հայրապետի վերհատուցանը՝ հայրապետական ընտրելի կարող են լինել այն բաձրատուցման հոգևորականները, որոնք իրանց երկարամեայ պաշտօնավարութեամբ և վարչական ու եկեղեցական կարգերի հմտութեամբ որոշ հեղինակութիւն են հանդիսանում, և դրանք են միայն արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները։ Վարդապետները, քահանաները ու աշխարհականները իրանց տարբերական դիրքից յանկարծ հայրապետական աթոռ բարձրանալով չեն կարող հեղինակութիւն հանդիսանալ յաչս հոգևոր ու աշխարհական պաշտօնեաների և ժողովրդեան, և հայրապետական բարձր իշխանութիւնը կը նսեմանայ։

Ցոյս ունենք՝ թէ Նախարարական այս բացատրութիւնից յետոյ կը դադարեն վարդապետներին, քահանաներին ու աշխարհականների թեկնածութեան մասին պնդումները՝ որոնք հիմնուած չլինելով եկեղեցական կանոնների, նոր-բագործուած տարբերութիւնների և վարչական հրահանգների վերայ, անհեռանք կը մնան։

Կ. Պոլսոյ ազգային երես. ժողովը մայիսի 6-ին.

Մայիսի 6-ին Ազգ. երես. ժողովում գոնիակ կարդացուել է պատրիարքական Սրբազան տեղապահի տեղեկագիրը ազգային վարչութեան գործունէութեան և յարաբերական խնդիրների մասին. որոշուել է կարծիքների փոխանակութիւնը թողնել առաջիկայ նիստին։

Այս ժողովում դիւան կազմելու համար ընտրուել են

Ստեփանեաներ—

Ա. Մանուկ էֆ. Ազարեան (կենդր.) 40 քուէ.
Բ. Հրանտ էֆ. Ատամուր (անկախ) 44 »
Գ. Հայկ էֆ. Խոճասարեան (կենդ.) 37 »

Վերջին երկուքը կրկնաքուէարկութեամբ։

Ատենադպիրներ

Ա. Օհանիկ էֆ. Զիֆթէ—Սարաֆ. (կենդ.) 38 քուէ
Բ. Մարկոս էֆ. Նաթանեան (կենդ.) 34 »
Գ. Զարեհ էֆ. Խորասանճեան (կենդ.) 32 »

Վերջինը կրկնաքուէարկութեամբ։

Այսպէս դիւանի նախկին կազմը վերընտրուել է բացառութեամբ բ. ատենապետ Պարգև էֆ. Փափազեանի և ա. ատենադպիր Աբրահամ էֆ. Տէր Յակոբեանի, որոնք բացարձակապէս հրաժարուել են ընտրելիութիւնից։ Նայելով դիւանի կազմին բացառութեամբ մէկի, ամբողջովին կենդրոնական է։ Քուէարկողներն էին 70 հոգի.

Վարչական ժողովների ընտրութիւն

Մայիսի 13-ին, ուրբաթ օրը գումարած ազգ. երեսփոխանական ժողովում 78 քուէարկուների մասնակցութեամբ (7 հոգի ձեռնպահ մնացին). ընտրուեցին.

Կրօնական ժողովի անդամներ.

1. Տ. Վահրամ արքեպիսկոպոս Մանկունի 68 քուէ
2. Տ. Գրիգորիս » Յովհաննիսեան 68 »
3. Տ. Գաբրիէլ եպս. Ճէվահիրճեան 68 »
4. Տ. Սմբատ ծ. վրդ. Գազազեան 66 »
5. Տ. Գրիգորիս ծ. վրդ. Բալաքեան 65 »
6. Տ. Վարդան քահ. Դերձակեան 65 »

Մնացեալները համեմատական մնացին.

Քաղաքական ժողովի անդամ ընտրուեցին.

1. Պետրոս էֆ. Խորասանճեան 75 քուէ
2. Յակոբ էֆ. Սուամպուլեան 75 »
3. Պետրոս էֆ. Հալաճեան 71 »
4. Գարեգին էֆ. Գույումճեան 71 »
5. Ոսկան էֆ. Մարտիկեան 67 »
6. Լևոն էֆ. Տէմիրճիպաշեան 44 »
7. Յարութիւն էֆ. Մոսարճեան 43 »

8. Գէորգ էֆ. Ալանեան 40 »
9. Գեղամ էֆ. Տէր Կարապետեան 40 »
10. Տօք. Տիգրան-պէյ Ամէմեան 40 »

Մնացածները Համեմատականի մեռցին.

Մայիսի 20-ին, ուրբաթ օրը գումարած ազգ. երեսփ. ժողովը Համեմատականի մնացած ազգային վարչութիւնների անդամների ընտրութիւնը կատարեց 85 անձանց քուէարկութեամբ և ընտրուեցին

Կրօնական ժողովի համար

Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունի 52 քուէ
Տ. Ղևոնդ վարդապետ Դուրեան 45 »
Տ. Եղիազար քահանայ Պօղոսեան 45 »
Տ. Աբրահամ » Էպէեան 44 »
Տ. Հմայեակ » Էքսէրճեան 42 »
Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան 42 »
Տ. Գրիգոր քահանայ Ճեպէճեան 41 »
Տ. Յակոբոս » Տէլէճէկեան 41 »

Քաղաքական ժողովի անդամ

Արտաշէս էֆ. Ծընտրբլեան 47 քուէ
Երուանդ » Խորասան 44 »
Գէորգ » Ցէրհատ 41 »

Կրօն. և քաղ. ժողովները հաստատուել են մայիսի 24-ին դատական նախարարութիւնից.

Զինուորական եւ կրթական խնդիրներ

Այս խնդիրների առիթով Կ. Պոլսոյ հինգ պատրիարքարանների (յունաց, հայոց, հայ-հռոմէականների, Բուլգարների և քաղդէացոց) մէջ կազմուած համաձայնութեան համեմատ բարձրագոյն դրան թագրիրներ են մատուցուել։ Հոգևոր պետերի այս համաձայնութիւնը դժգոհութիւն է առաջ բերել թուրք շրջաններում։

Հողային խնդիրը զուտ հայոց վերաբերեալ լինելով համաձայնութեան կէտերի մէջ չէր կարող լինել։